ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1964 Общественные науки

Ս. Թ. Իշխանյան

«ԱՇԽԱՏԱՆՔ» ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

Հնօրյա հայ պարբերականների ընտանիքում իր ծրագրով առանձին տեղ է գրավում 1906—1907 թվականներին Թիֆլիսում լույս տեսած «Աշխատանք» դեմոկրատական հանդեսը։ «Աշխատանքը» հայ իրականության մեջ գյուղացիական դեմոկրատիայի ձայնափողն էր։

Հրապարակախոսական ու գեղարվեստական, այլև ժուռնալային բազմազան ձևերով ու հնարանքներով հանդեսն արտացոլել է հայ աշխատավոր գյուղացիության տնտեսական ու իրավական ծանր վիճակը, ըմբոստացել ցարական ինքնակալական ռեժիմի դեմ, մաքառել երկրի ամբողջ կյանքի դեմոկրատացման համար։ Հանդեսը իրավացի կերպով գտնում էր, որ գյուղացիական թշվառության հիմնական պատճառը կալվածատիրական հողատիրությունն ու ահավոր հողազրկությունն է, իսկ փրկության ելքը՝ մասսայական գյուղացիական շարժման միջոցով կալվածատիրական հողատիրության բռնի ոչնչացումը։

«Աշխատանքի» շուրջը համախմբված առաջադեմ, արմատական դեմոկրատական հայացքներ կրող աշխատակիցների կազմը նրան տալիս էր այն երանգը, գաղափարական-հասարակական այն ուղղությունը, որով և նա զգալիորեն տարբերվում էր ժամանակի դեմոկրատական, նարոդնիկական ուղղության մյուս պարբերականներից։ «Աշխատանքը» հիմնադրել ու նրա խմբագիրն է եղել հայտնի հրապարակախոս ու հասարակական գործիչ, դեմոկրատ ժուռնալիստ ու երգիծաբան Աշոտ Աթանասյանը։ «Աշխատանքի» ծրագրային ու տակտիկական դիրքորոշման, ինչպես և նրա խմբագրի աշխարհայացքի մասին մենք արդեն առիթ ենք ունեցել գրելու։ Ա. Աթանասյանի գրչին են պատկանում հանդեսում տպագրված բոլոր առաջնորդող ու խմբագրական հոդվածները, բազմաթիվ հրապարակախոսական ելույթներ։ Այդ կարգի նյութերում է առավելապես, որ, ինչպես հայելու մեջ, արտացոլվել է պարբերականի դեմքը, նրա ուղղությունը։ Ա. Աթանասյանը, դրանցից զատ, հանդեսում զետեղել է տասնյակ ֆելիետոններ ու կատակներ, գրախոսականներ, գյուղատնտեսական գրույցներ և այլ կարգի նյութեր։ Ա. Աթանասյանին պատկանող բոլոր ժանրերի նյութերի թիվը հանդեսում 200-ից ավելի է։

Սակայն, ինչպես ասացինք, «Աշխատանքի» հասարակական և պատմագիտական արժեքը մեծ չափով բարձրանում է այն հանգամանքով, որ նրան աշխատակցել են ժամանակի առաջադիմական մի շարք գործիչներ, հրապարակախոսներ ու գրողներ, որոնք թե՛ վաղեմի այն օրերին և թե՛ հետագայում նշմարելի դեր են կատարել հայ հասարակական մտքի պատմության մեջ։

Այստեղ մենք նկատի ունենք այն հեղինակներին, որոնք ավելի տևականորեն են աշխատակցել հանդեսին, տպագրելով նրանում համեմատաբար մեծ թվով նյութեր։ Այս ասելով, սակայն, չպետք է մոռացության տալ նաև մի շարք անվանի գործիչների այն, թեկուզ և եզակի, նյութերը, որոնք բավարար չափով հատկանշական են հանդեսի ուղղության համար։ Բերենք օրինակներ։

«Աշխատանքի» 1906 թվականի № 21-ում բոլշևիկյան «Կայծ» թերթից արտատպված է «Դժոխները միանում են» վերնագրով հոդվածը, որը պատկանում է Ստ. Շահումյանի գրչին և «Կայծում» ունի «Ներկա մոմենտը» խորագիրը։ Հոդվածում Ստ. Շահումյանը, արձագանքելով 1906 թվականի գարնանը հուժկու թափ ընդունած գյուղացիական շարժմանը, հետևողական մարքսիստական դիրքերից գնահատում է այդ շարժումը և փայլուն կերպով պաշտպանում հեղափոխության մեջ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի լենինյան կաղապարը։

Այնուհետև «Աշխատանքի» 1906 թվականի № 18-ում գերմանական սոցիալ-դեմոկրատիայի տեսական օրգան «Neue Zeit» («Նոր ժամանակ») ժուռնալի № 6-ից արտատպված է «Ջընդհատվող հեղափոխություն» հոդվածը։ Դրա հեղինակը գերմանական և միջազգային բանվորական շարժման ականավոր գործիչ Ֆր. Մերինգն է։ Հոդվածի հայերեն թարգմանությունը պատկանում է Հակոբ Հակոբյանին։

Հոդվածում հեղինակը հստակ գնահատականներ է տալիս ռուսական առաջին հեղափոխության բնույթն ու նպատակները բնորոշելիս։ Զուգահեռներ անցկացնելով ռուսական ազատագրական պայքարի և Արևմտյան Եվրոպայում կատարված բուրժուական հեղափոխությունների միջև, նա գրում է, որ ռուսական հեղափոխությունը վերջիններից տարբերվում է նրանով, որ նրան ղեկավարում է իր շահերը լավ գիտակցող պրոլետարիատը, և հանգում միանգամայն գիտական այն եզրակացության, որ այդ հեղափոխությունը, ընթանալով պատմական նոր պայմաններում, ռուսական պրոլետարիատին դարձրել է «եվրոպական պրոլետարիատի առաջավոր մարտի ռազմիկը»։ Հեղափոխական թեորիայի և տակտիկայի այնպիսի հրատապ հարցեր, ինչպիսիք են՝ անընդհատ հեղափոխության գաղափարը, բուրժուական և պրոլետարական հեղափոխությունների հարաբերակցությունը, բուրժուական հեղափոխության մեջ պրոլետարիատի խնդիրները և այլն, Մերինգը լուսաբանում է՝ ելնելով հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի դիրքերից։

Ռուսական հեղափոխությունը ազգայի՞ն երևույթ է արդյոք, կսահմանափակվի՞ նա մի պետության սահմաններով. այս հարցերին ևս Մերինգը մոտենում է մարքսիստական դիրքերից։ Անդրադառնալով ռուսական ազատագրական պայքարի միջազգային նշանակությանը, նա պնդում է, որ այդ հեղափոխությունը չի սահմանափակվի Ռուսաստանի սահմաններում։ «Բոլոր եվրոպական ազգի բանվորների մեջ թռել են ռուսական հեղափոխության խարույկի կայծերը և Ավստրիայում արդեն բռնկվել ու վառվում է կրակը»[2]—գրում է նա։

Հավատարիմ մնալով պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգուն, Մերինգը գրում է, որ գերմանական պրոլետարիատը ամենալարված ուշադրությամբ կհետևի ռուսական հեղափոխության զարգացմանը և «պիտի ավելի շատ մտածի այն մասին, թե Ռուսաստանի բանվորների գործը նաև իր գործն է»։

Տեղին է հիշատակել, որ Վ. Ի. Լենինը մի շարք առիթներով նշել է Ֆր. Մերինգի ճիշտ հեղափոխական-մարքսիստական դիրքորոշումը ռուսական հեղափոխության զանազան պրոբլեմների նկատմամբ։ Այսպես, օրինակ, իր «Ֆր.

---

1 «Աշխատանք», 1906, № 18, էջ 277—279։

2 Նույն տեղում, էջ 279։

Մերինգը երկրորդ դումայի մասին» հոդվածում[3] Լենինը մեջ բերելով Մերինգի գնահատականը «Ռուսական դումայի և ռուսական լիբերալիզմի մասին»՝ գրում է. «Ընթերցողներին հայտնի է, իհարկե, որ Մերինգը, ինչպես և «Neue Zeit»-ի ամբողջ խմբագրական կոլեգիան կանգնած է ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի տեսակետի վրա»[4]։ Քննադատելով Պլեխանովի և մենշևիկների տակտիկան վերը շարադրված հարցերում Լենինը գոհունակությամբ գրում է, որ «Մերինգը լավ դաս է տալիս այդ մարդկանց»։

Բերենք «Աշխատանքում» տպագրված Մերինգի հոդվածից մի հատված.

«Եվ այդպես Ռուսաստանի բանվորները դարձել են եվրոպական պրոլետարիատի առաջավոր մարտի ռազմիկները, նրանց ընկել է մի բախտավոր վիճակ, որը ծանոթ չէր հարավային Եվրոպայի ազգերի պրոլետարիատին։

Ռուսաստանի բանվորները հեղափոխության ասպարեզում դուրս եկան ավելի խտացած փորձառությամբ, մարզված, խորին և լայն թեորիայով զինված։ Եվ նրանք կարողացան արժանանալ այդ բախտին։

Տասնյակ տարիների ընթացքում մղած կռվում բազմաթիվ հերոսական զոհեր տալով, պրոլետարական հեղափոխության թեորիան մտավ նրանց արյունի և հոգու մեջ։ Այն, ինչ որ կրել են նրանք իրենց կյանքում, այժմ վերադարձնում են հարյուրապատիկ»[5]։

«Աշխատանքում» տպագրվել են Ղ. Աղայանի «Փիղն ու Ջստիկը» բանաստեղծությունը (1906 թ., № 4), Վ. Փափազյանի «Հողի աշխատավորը» պատմվածքը (1906 թ., № 1, 2, 3, 4), ինչպես նաև «Թյուրքահայերի վիճակը» հոդվածը (1906 թ., № 3), Աթ. Խնկոյանի «Հայ գյուղացուն» բանաստեղծությունը (1906 թ., № 20), Գ. Բաշինջաղյանի «Արո» պատմվածքը (1906 թ., № 28)։

Ավելորդ համարելով վերը թվարկված հանրահայտ ստեղծագործությունների վրա կանգ առնել, մենք կցանկանայինք ուշադրության առնել Վ. Փափազյանի «Թյուրքահայերի վիճակը» հոդվածը։ Նրանում մենք գտնում ենք ժամանակին հայ ժողովրդին հուզող կենսական մեծ պրոբլեմի նկատմամբ անվանի դեմոկրատ գրողի շատ ուրույն մտքերը, որոնք անշուշտ կհետաքրքրեն բանասեր-պատմաբաններին։ Հոդվածի բովանդակությունն ու տոնը վկայում են, թե ինչ խորը արձագանք էր գտնում արևմտահայ աշխատավորության սոսկումներով լի վիճակը առաջավոր ինտելիգենցիայի շրջանում։ Խորը ատելություն կա այնտեղ այն մարդկանց նկատմամբ, որոնք թուրքական բռնակալության կողմից հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման պատճառը փնտրում էին իրենց՝ հայերի մեջ, մեղադրելով նրանց «անհանգիստ» և «անհնազանդ» բնավորության մեջ։ Վ. Փափազյանը մերժում է այն մարդկանց խրատները, որոնք հային ասում են. «Պիտի խելոք մնար, որ ծեծ չուտեր»... Պնդելով, որ բռնության դեմ հայ մարդկանց ընդվզումը դա նրանց բնական և օրինական իրավունքն է, հեղինակը գրում է. «Մեղադրել ճնշման դեմ ելնողին, բռնության դեմ կռվողին և իր անձն ու գույքը, իր տունն ու տեղը մի ավազակ ռեժիմի դեմ պաշտպանողին—նշանակում է առնվազն լինել բռնավորի կողմնակից և ոչխարային հլության սիրահար»[6]։

---

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 12, էջ 464։

4 Նույն տեղում, էջ 472։

5 «Աշխատանք», 1906, № 18, էջ 279։

6 «Աշխատանք», 1906, № 3, էջ 36։

Նման խրատները նորություն չեն, գրում է հեղինակը, սկսած ֆրանսիական հեղափոխության առաջին օրերից մինչև ստրուկ ազգերի ապստամբության օրերը։ Աչքի առաջ ունենալով ազգային-ազատագրական շարժումները, նա պնդում է, որ նման խրատներ հնչում էին և՛ Հունաստանում, և՛ Բուլղարիայում, և՛ Սերբիայում, և՛ նույնիսկ Ռուսաստանում։

Դեռևս վաղեմի այն օրերին Վ. Փափազյանն առաջ է քաշում արևմտահայ ազատագրական շարժումներին վերաբերող ուշագրավ հարցեր, որոնք հավանորեն չեն կորցրել իրենց հետաքրքրությունը մեր օրերի պատմագիտության համար։

«Աշխատանքի» առավել ակտիվ հեղինակներից առաջին հերթին հարկ է հիշատակել հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր ու վետերան Հակոբ Հակոբյանին։ Անվանի բանաստեղծը ժամանակին շատ մոտ կապեր է ունեցել Աթանասյանի հետ, հորդորել է նրան իր խմբագրական-հրատարակչական գործերում։ Ա. Աթանասյանն էլ իր հերթին մեծ համակրանք է տածել դեպի Հ. Հակոբյանը, նրա միջոցով շփվել է մարքսիստական շրջանների հետ, նրա ընտանիքում ծանոթացել Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի հետ, մինչև իր կյանքի վերջը մնալով նրանց լուսավոր կերպարների երկրպագուն։ Ականավոր բոլշևիկ-լենինյանների, ինչպես նաև Հ. Հակոբյանի նկատմամբ իր ջերմ համակրանքը Ա. Աթանասյանն արտահայտել է մի շարք անգամներ մամուլում[7] և, հատկապես, իր չհրապարակված հուշերում[8]։

Հ. Հակոբյանը «Աշխատանքում» տպագրել է «Գարնան ավետիք» (1906 թ., № 9, էջ 132—133), «Նվեր օր. Ագ-ին» (1906 թ., № 12, էջ 178), «Երգ» (1906 թ., № 19, էջ 291), «Դրոշակը» (1906 թ., № 33, էջ 515), «Շեմքում» (1907 թ., № 1, էջ 3), «Ողջույն քեզ, արև՛» (1907 թ., № 6, էջ 83), «Կտենի» (1906 թ., № 1, էջ 6), «Կաթսավար» (1906 թ., № 3, էջ 36), «Երկու ախոյան» (1906 թ., № 5, էջ 70), «Բուրժուաներին» (1906 թ., № 7, էջ 99) բանաստեղծությունները։ Վերջին չորս բանաստեղծությունները առաջին անգամ տպագրվել են «Աշխատանքում»։ Հանրահայտ է, որ Հ. Հակոբյանի հեղափոխական բանաստեղծությունները խորապես ազդում էին հասարակության առաջավոր տարրերի վրա, նրանց մեջ բորբոքում մարտնչող ոգի, առաջ բերում մեծ և լուսավոր ձգտումներ։

«Աշխատանքի» խմբագիր Ա. Աթանասյանից հետո հանդեսում սոցիալ-քաղաքական բնույթի հոդվածներով հանդես է եկել դեմոկրատական հասարակայնության աչքի ընկնող ներկայացուցիչ, հայ պարբերական մամուլի ակտիվ աշխատակից Խ. Սամվելյանը, որը, ինչպես հայտնի է, անցյալում հարել է սոցիալ-դեմոկրատիայի «փոքրամասնական» հոսանքին։ Խ. Սամվելյանը, սակայն, այն գործիչներից է, որը, չնայած իր կապերին «Պայքար» լրագրի երկրորդ փուլի ղեկավարների հետ, հետագայում արձագանքել է Սովետական Հայաստանի կառուցողների պայքարին և հանդես է եկել սովետահայ նոր մշակույթի ակտիվ պաշտպանի դերում։

---

7 Տե՛ս «Աշխատանք», 1906 թ., № 18, էջ 287, «Մարտակոչ», 1923 թ., № 234, էջ 2։

8 Ա. Աթանասյանի անձնական արխիվը և չհրապարակված հուշերը գտնվում են նրա ավագ որդի Հր. Աթանասյանի մոտ։

«Աշխատանքում» տպագրվել են Խ. Սամվելյանի «Հայ գյուղացին և հայ մամուլը»[9], «Հայ գյուղական պրոլետարիատը[10], «Օրենքն ու իրավունքը մեղանում»[11], «Գյուղացիական հողային բանկը»[12] հոդվածները։ Ուշագրավ մտքեր է արտահայտում Խ. Սամվելյանը իր «Հայ գյուղացին և հայ մամուլը» հոդվածում։ Նշելով այն սոցիալ-տնտեսական տեղաշարժերը, որ կատարվել են հայ գյուղացու կյանքում կապիտալի ներխուժման հետևանքով, հեղինակը պնդում է, որ «...Գյուղացու աշխատանքի և հողատիրական իրավունքի ներկա ձևերը, որոնք այնքան քնքշությամբ փայփայվում, հովանավորվում են ռուս բյուրոկրատիայի մեռցնող ռեժիմի շնորհիվ, այլևս չեն համապատասխանում արդի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին և դարձել են մի անախրոնիզմ գյուղական հյուծվող կյանքում»[13]։ Իսկ հայ մամուլը, գրում է հեղինակը, մինչև այժմ բավարարվել է ներբողներ գրելով հայ գյուղացու նահապետական նիստուկացի, նրա գրության արտաքին կողմերի մասին, չխորանալով հայ շինականի սոցիալ-տնտեսական պայմանների մեջ։ Աչքի առաջ ունենալով հայ կղերա-պահպանողական և բուրժուական մամուլը, նա գրում է, որ այդ մամուլը «հրապարակախոսության փրփուրը բերանին» սահմանափակվում էր դպրոցական-հոգաբարձական, եկեղեցական-քահանայական հարցեր արծարծելով։ Հեղինակն այնուհետև պնդում է, որ մինչև այժմ իրենց հայ գյուղացիության դաղափարախոսներ համարող ինտելիգենցիան ու մամուլը չեն արտահայտել նրա իսկական շահերն ու ձգտումները, նրա ներկան և ապագան, լցնելով «հայ գրականության էջերը իրենց ուղեղի ողորմելի արտադրություններով, իրենց նեղ բուրժուական աշխարհայացքի գոհարներով»։

Խնդիր չդնելով իր առջև գյուղացիական-ագրարային հարցի որևէ կոնկրետ ծրագիր առաջադրել, հոդվածագիրը նշում է, որ ռուսական ազատագրական պայքարի պահին, երբ ժողովուրդները ոտքի են ելել հին ռեժիմի դեմ և պայքարում են ապագա վերածնված Ռուսաստանի համար, պետք է մշակել որոշակի հողային-տնտեսական ծրագիր, ելնելով հայ գյուղացիության սոցիալ-տնտեսական պայմաններից։

«Հայ գյուղական պրոլետարիատը» հոդվածում Խ. Սամվելյանը նկարագրում է Կովկասի հայ գյուղացիության, հայ գյուղի քայքայման իրական պատկերը, դրա հիմնական պատճառը տեսնելով սակավահողության և կալվածատիրական հողատիրության մեջ։ Հայ գյուղի սոցիալ-տնտեսական վերլուծության հիման վրա հեղինակը ցույց է տալիս, որ սխալվում են այն մարդիկ, որոնք, հետևելով նարոդնիկներին, կարծում են, թե հայ գյուղը միատարր է, թե մեր գյուղացիությունը մի ամբողջական զանգված է ներկայացնում։ Համոզիչ տնտեսական վերլուծմամբ ու գիտական փաստարկումներով ցույց է տալիս, որ կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով հեղաշրջվել են նաև հայ գյուղի հասարակական հարաբերությունները, հեղաշրջվել է նահապետական գյուղը՝ առաջ բերելով գյուղի շերտավորում, գյուղական բուրժուազիայի և գյուղական պրոլետարիատի գոյացում։

Ո՞րն է գյուղական բուրժուազիան. այստեղ է, որ հոդվածում անհրաժեշտ

9 «Աշխատանք», 1906 թ., № 1, էջ 7—9։
10 Նույն տեղում, № 5, էջ 66—68։ № 6, էջ 84—85։
11 Նույն տեղում, № 17, էջ 267—268։
12 Նույն տեղում, № 9, էջ 130—132։
13 Նույն տեղում, № 1, էջ 8։

հստակություն չկա։ Նկարագրելով գյուղի քայքայման, պրոլետարականացման ճշգրիտ պատկերը, հեղինակը գրում է, որ քայքայվելով և զրկվելով հողից, գյուղացիների մեծ մասը սկսում է մանր առևտրով զբաղվել, իսկ տնտեսապես ուժեղանալով՝ ձևավորվում է որպես գյուղական բուրժուազիա։ Գյուղական բուրժուազիան, անտարակույս, միայն մանրավաճառները չեն, այլ, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, հիմնականում այն ունևոր գյուղացիությունը, որի ձեռքում էր գտնվում գյուղացիական տնտեսությունների արտադրության միջոցների և սեփականության համարյա կեսը։ Վ. Ի. Լենինը մշտապես զգուշացնում էր, որ այդ փաստի անտեսումը կարող է առաջ բերել լուրջ սխալներ գյուղացիության նկատմամբ իրագործվող քաղաքականության մեջ։

Հրապարակախոսական բարձր շնչով գրված իր «Օրենքն ու իրավունքը մեզանում» հոդվածում Խ. Սամվելյանը ցասումով է դատապարտում ցարական իշխանությունների կամայականությունները, որոնք բուրժուական օրենքի և իրավունքի սրբագործված օրենքների պաշտպանության անվան տակ բռնություններ են գործադրում ժողովրդի հեղափոխական տարրերի նկատմամբ։

Հանուն օրենքի և իրավունքի, գրում է հեղինակը, ցարական պատժիչ արշավախմբերն ու էկզեկուցիաները մոլեգնում են հայկական գյուղերում, ժողովրդի լավագույն և թարմ ուժերին կախաղան են բարձրացնում, փտեցնում բանտերում ու հեռավոր աքսորներում։

Երկրի կյանքի, նրանում գործող օրենքների դեմոկրատացումը օրվա հրամայական պահանջն է դարձել. այս է նրա այդ պրոգրեսիվ մտորումների բուն իմաստը։

Դեմոկրատ-ժուռնալիստ ու հրապարակախոս Մ. Բագրատունին «Աշխատանքում» տպագրված առավել աչքի ընկնող հեղինակներից է։ Հայ մամուլի այդ ժրաջան ու բեղմնավոր գրիչը, ակտիվ հեղափոխական գործունեության հետ միասին, ժամանակին բառացի ողողել է մեր թերթերի ու պարբերականների էջերը։ Հատկապես Երևանի նահանգի, մանավանդ Արարատյան հարթավայրի կյանքից առնված նրա բազմաթիվ հոդվածները, ակնարկները, նամակները, գյուղական կյանքը պատկերող նյութերը տպագրվել են բոլշևիկյան մամուլում և առաջադիմական այլ պարբերականներում։ Մ. Բագրատունու գրչի տակից դուրս եկած նյութերում առատ և շատ արժեքավոր տեղեկություններ ենք գտնում 900-ական թվականների Երևանի գավառի հասարակական-քաղաքական կարևոր իրադարձությունների, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեության վերաբերյալ։ Իրերի տրամաբանությունը Մ. Բագրատունուն դարձրին սովետահայ մամուլի ակտիվ և ժրաջան մշակներից մեկը։ Մեր ավագ և միջին սերնդի հիշողության մեջ թարմ է տաղանդավոր ժուռնալիստ ու երգիծաբան Մ. Բագրատունու Փալանդուզ Մկոն։

Մ. Բագրատունին «Աշխատանքում» տպագրել է «Գլավնի» ակնարկը (1906 թ., №№ 13, 14, 15, 16), «Դիակների անապատից» (1906 թ., № 20), «Հարդելի ընկեր խմբագիր» (1906 թ., № 21), (Անվերնագիր նամակ, 1906 թ., № 24), «Նորից քարանձավներում» (1906 թ., № 24), «Գյուղացին և հողը» (1907 թ., № 2), «Նամակ Երևանից» (1907 թ., № 9) հոդվածները, թղթակցություններն ու նամակները։

Իրական կյանքից առնված «Գլավնի» ակնարկը իր բովանդակությամբ ու տոնով, մի համարձակ ընդվզում է տիրող կարգերի դեմ, և սխալված չենք լինի ասել, որ բողոք և ցասում հարուցող նման ցնցող պատկերի շատ քիչ կարելի է

հանդիպել ժամանակի հայ մամուլում։ Հայ գյուղը, իրավազուրկ ու տգետ հայ գյուղացին, գյուղական ցեցերն ու վամպիրները այստեղ ներկայացված են իրենց ամբողջ մերկությամբ։

Որ «Գլավնի» ակնարկը իրական պատկեր է, երևում է նրանից, որ Մ. Բագրատունին, այդ համարձակ ու անվախ գրչի տերը, շարունակ ենթարկվել է հալածանքների։ Այս հանգամանքը ցայտունորեն արտահայտված է «Աշխատանքի» խմբագրին ուղարկած նրա նամակում։

Երևանից գրած այդ նամակում Մ. Բագրատունին գանգատվում է, որ «Գլավնի» վիպակի և «Կայծում» հաճախ տպագրվող իր հոդվածների համար «բավական անախորժ բարեկամներ է շահել»։ Սպառնալիքներից հեռու մնալու համար նա խուսափում է իր հայրենի Կարբի գյուղը գնալ, «որովհետև վեքիլներն ու մի շարք պարազիտներ հրապարակում հավաքվում են ու մի «բոլ» հայհոյում»։ Գործն այն տեղն է հասնում, որ աներկյուղ ժուռնալիստից վրեժ առնելու համար գյուղի «տերերը» սեփականացնում են նրան պատկանող հողը։ Սակայն դա չի ընկճում Բագրատունուն։ Հիշյալ նամակում նա այդ երևույթները «դատարկ բաներ» է համարում ու հանդեսում ուշագրավ փաստեր է հաղորդում Երևանում տիրող դրության մասին։

«Գլավնի» ակնարկի հերոսը Ա գյուղի կուլակ նենգ ու ստահակ, խաբեբա ու ստոր Թուլի-Փանոսն է։ Մոտեցել էին «Գլավնու» ընտրության օրերը։ Գյուղի մեծամեծները՝ տզրուկներն ու վաշխառուները, իրարանցման մեջ էին։ «Գլավնին» մի շահավետ ու դյութիչ պաշտոն էր, որ գրգռել էր շրջակա գյուղերի գայլերի ախորժակը։ Մ. Բագրատունին հյութեղ գույներով, սպանիչ սարկազմով տալիս է «Գլավնու» ամբողջ «հմայքը»։ Մեջ բերենք այդ հատվածը։

«Գլավնի...

Դա հո մի շահավետ և դյութական խոսք է մեր գյուղական ամեն մի աչքի ընկնող Կրեսոսի համար, դա մի կատարյալ փառք է։

Երևակայիր, որ քեզ զգում ես լիակատար հրամայող, իշխող ամբողջ 1000—1500 տնից բաղկացած համայնքի, կառավարողը և տնօրինողը այդ ժողովրդի բոլոր դատական գործերի, տան-ու-տերը։

Քյահլան ձին նստած, մտրակը ձեռիդ, չափարն էլ հրացանն ուսին, քեզ հետևելիս, արշավում ես այս գյուղից այն գյուղ, ամեն տեղ կարգադրում ես, ամեն տեղ հրամայում, ամեն տեղ ժողովուրդը խոնարհ հարսի պես գլուխը ծռած, առաջդ խոնարհվում, աղերսանքն աչքերին քեզ խնդրում՝ «Վերև աստված, ներքև դու» ասելով, աղաչում, որ իր վիճակին հասնես։

Իսկ դու թափ ես տալիս մտրակդ ամենքի վրա, բարկանում ես, ոտներդ դետնովը տալիս, հայհոյում, հաճախ էլ «զարբոր» (զորություն) ցույց տալու համար մեկն ու մեկին ձգում ոտներիդ տակ այնքան ես ջարդում, որ աշխարհը սարսռում է, մանավանդ, երբ գործ ունես հակառակորդիդ կամ թշնամուդ հետ»[14]։

Ընթերցողի մեջ խորը դայրույթ ու այրող ատելություն են առաջ բերում տիրող կարգերի հանդեպ պատմվածքի այն հատվածները, որտեղ նկարագրված են Թուլի-Փանոսի և նրա համախոհների նախընտրական «ճիգերը», երբ գործի են դրվում կաշառքն ու սպառնալիքը, կեղծ խոստումներն ու երեսպաշտությունը։ Եվ արդյունքը լինում է այն, որ ահաբեկված ընտրողները, երկյուղ կրելով

14 «Աշխատանք», 1906, № 13, էջ 206։

հնարավոր վրեժխնդրությունից «քարը գցում են» Թուլի-Փանոսի արկղը։ Փանոս Մելիքովը, պրիստավներին ու գավառապետներին, նահանգատան ու փոխարքայության չինովնիկներին «տեսնելուց», կաշառելուց հետո, գլավնի է հաստատվում։ «Այս անգամ նա գլավնիության մտրակը ձեռքն առավ, հունձը առատ բերք էր խոստանում»։

Ուշագրավ է Մ. Բագրատունու «Գյուղացին և հողը» հոդվածը, որը ցարական կառավարության վարած ագրարային քաղաքականության արձագանքն է։ Այն բոլոր միջոցառումները, որ գործադրում է կառավարությունը հողային հարցում, առաջ է բերում համայնական հողատիրության քայքայում, գյուղացիության սեփականազրկում և որպես դրա հետևանք սրվում է դասակարգային կռիվը գյուղում—այս է հոդվածի հիմնական առանցքը։ Քննելով Կովկասում և հատկապես հայ գյուղերում տիրող հողային հարաբերություններն ու հողօգտագործման վիճակը, հեղինակը պնդում է, որ ի տարբերություն այլ երկրների. «մեր գյուղացիության մեջ սրբագործված է հողային համայնացման սկզբունքը. և այդ համայնացումը միշտ նա աշխատել է գնել ընդհանրական արդար բաժանման տեսակետի վրա»։ Ճիշտ է դատում հեղինակը, անշուշտ, երբ պնդում է, որ հողային նոր օրենքները նպատակ ունեն ստեղծել գյուղում ամուր հենարան ցարական կարգերի համար և որ դրա հետևանքը կլինի այն, որ գյուղացիության ստվար մեծամասնությունը կդառնա հողազուրկ մի դասակարգ։

Վերոհիշյալ հոդվածը, որ գրված է դեմոկրատական-պրոգրեսիվ դիրքերից, կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով գյուղի քայքայման, նրա շերտավորման ու դասակարգային պայքարի սրման ճշմարտացի պատկեր է։

1906 թվականի գարնանը նոր ուժով է բորբոքվում հայ և ադրբեջանական բնակչության միջև եղբայրասպան արյունհեղությունը։ Երևանի, Շուշիի, Ղարսի, Սուրմալուի գավառներում ազգամիջյան կոտորածները լայն չափեր էին ընդունել։ Բոլշևիկյան «Կայծ» թերթի Ստ. Շահումյանի ձեռքով գրված առաջնորդողն այդ օրերին գրում էր. «Հեղափոխության ալիքները բարձրանում են, ժողովրդական բողոքի սպառնալիքը մոտենում է, և ոճրագործ բռնակալությունը նորից ամեն տեղ շարժում է իր մութ ուժերը։ Ամեն տեղ, ուր նա հնար ունի գործ չդնել իր զորքերի անմիջական ուժը և միմյանց դեմ ուղղելու հպատակ ազգերը, նա աշխատում է այդ եղբայրասպան արյան մեջ խեղդելու բողոքի ձայները, արյունաքամ և ուժասպառ անելու հեղափոխությունը»[15]։ «Կայծը» կոչ էր անում աշխատավորներին, դեմոկրատական բոլոր ուժերին ճանաչել իսկական թշնամուն, չենթարկվել ցարական իշխանությունների սարքած այդ պրովոկացիային և մերկացնել դրանց բորբոքող հանցավորներին։ «Աշխատանքում» տպագրված նյութերը, անտարակույս, հաջողությամբ էին լուծում այդ հարցերը։ Դրան զգալի չափով նպաստում էին Մ. Բագրատունու Երևանից գրած նամակներն ու թղթակցությունները, որոնցում ցնցող պատկերներ էին նկարագրվում եղբայրասպան ողբերգությունից։

«Դիակների անապատից»—այսպես է վերնագրում իր մի թղթակցությունը (1906 թ., № 20) Բագրատունին, նկարագրելով այդ օրերի Երևանի վիճակը։

---

15 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 158—160։

Դժոխքի թագավորություն, վիշապի պես սողող կոշմար, խելակորույս ուրվականներ, դիակների անապատ՝ ահա պատկերը։ Եվ դժվար չէ հասկանալ հեղինակի միտումը, երբ նա գրում է. «Եվ նորից այդ լուռ, տաք դիակները կրկնում են իրենց լուռ բողոքը. նորից ցույց են տալիս քեզ այն գորշ էակի վրա, որ ծնում է կոշմարը. նորից խոսում են նրանք այն այլանդակ մթնոլորտի մասին, որտեղ ապրում էին իրենք, որտեղ այլ ևս սպառվել է մարդկայինը, որտեղ միմիայն տարերքը ծնվել է արյունոտ անապատի մեջ. և նա միայն դիակներ է տալիս, ուրիշ ոչինչ։ Նա պիտի մեռնի՞ արդյոք»[16]։

Դեմոկրատ ժուռնալիստ ու հումանիստ գրող Մ. Բագրատունու համար ցարական կարգերը, թե՛ հայի և թե՛ ադրբեջանցու համար հավասարապես, դժոխքի թագավորություն էր, այն այլանդակ մթնոլորտը, որի մահվան հետևանքով միայն վերջ կունենար մարդկային այդ թշվառությունը։

Ցարական էկսեկուցիաների և բռնությունների մի այլ պատկեր է գծագրում մեր առջև Բագրատունին «Նորից քարանձավներում» (1906 թ., № 24) թղթակցություն-ակնարկի մեջ։ «Կողակները գալիս են...» ահա այն գուժող լուրը, որ հաճախ պայթում է հայ գյուղացու գլխին։

Եվ ծայր է առնում սրտամորմոք մի վայնասուն, բացվում է մի սրտառուչ տեսարան, որի առաջ գալարվում են մարդկային սիրտն ու ոգին։ Բազմատանջ հողի աշխատավորը, թողնելով իր խաղաղ աշխատանքի օրրանը, առած այն բոլորը, ինչ կարող է, հեռանում է դեպի... դեպի ո՞ւր, ո՞ւր գնալ. և նա միակ ելքը գտնում է իր նախնիների բացած քարանձավները, որտեղ թաքնվել էին նրանք ահաբեկված երբեմնի հայրենի հողը ասպանդակող օտար նվաճողների բռնություններից։

Այս է ակնարկի հիմնական բովանդակությունը։ Սակայն ավելի ուշագրավ է նրա ֆինալը։ Հեղինակը, վկայակոչելով լուսնին, գրում է, որ նա դեռ վաղեմի այն օրերին ականատես է եղել բյուրավոր մարդկային ոճիրների, արյունռուշտ տեսարանների։ Այժմ էլ նա տեսնում է նորից արյունոտ դիակներ, մոխիր դարձած գյուղեր։ Բսկ այն հարցին, թե ի՞նչ տարբերություն կա ներկա և անցյալ դարերի վայրագ պատմության մեջ, լուսինը պատասխանում է. ոչի՛նչ։

Աշխատավորների տնտեսական և իրավական ծանր կացությունը պատկերող Մ. Բագրատունու «Նամակ Երևանից» թղթակցության մեջ (1907 թ., № 9) հաղորդվում է, որ գնալով շրջակա գյուղերից Երևան են գալիս ավելի մեծ թվով գյուղացիներ։ Սովն ու թանկությունը նպաստավոր պայմաններ են ստեղծել, որպեսզի հողատերերն ու խաղեյինները չնչին աշխատավարձով քամեն քաղաք եկած ֆահլաների քրտինքը։ Եվ ահա։ վաղեմի լռության սառույցը կոտրվում է։ Ցնչին օրավարձով աշխատող բանվորները մի փորձ են կատարում, հավաքվում քաղաքի գերեզմանոցներից մեկում՝ իրենց դրության մասին մտածելու համար։ Սակայն ոստիկանությունը շրջապատում է բանվորներին և ցրում նրանց ժողովը։ Նամակի մեջ հաղորդվում է նաև, որ ամբողջ 20 օր գործադուլ էին արել քաղաքի Հ. Եղիազարյանի բաղնիքում աշխատող բանվորները և աշխատանքի են վերադարձել տիրոջ կողմից իրենց պահանջները բավարարելուց հետո միայն։

Ջավախեցին (Ղազարոս Տեր-Գրիգորյանը) հայ գյուղագիրների այն սերընդին է պատկանում, որոնք իրենց գեղարվեստական գործերում պատկերել

16 «Աշխատանք», 1906, № 314։

են անցյալ դարի 90-ական թվականներին և մեր դարասկզբին բուրժուական հարաբերությունների զարգացման հետևանքով մեծ չափեր ընդունած գյուղի քայքայումն ու աղքատացումը։ Ա. Ագապյանի, Ա. Ադելյանի, Հ. Ճուղուրյանի, Ա. Շահնազարյանի, Հ. Մալխասյանի, ինչպես նաև Ջավախեցու գյուղական կյանքից առնված պատկերներն արժեքավոր գեղարվեստական փաստաթղթեր են, որոնցում ցայտունորեն արտահայտվել են կուլակների ու վաշխառուների, դատական չինովնիկների ճիրաններում հեծող հայ աշխատավոր գյուղացու սոցիալական բողոքն ու ընդվզումը։

Բավականին եռանդուն կերպով է աշխատակցել Ջավախեցին «Աշխատանքին», նրանում տպագրելով գյուղի կյանքին վերաբերող պատկերներ, իսկ ավելի հաճախ՝ զանազան թղթակցություններ։ Մեր ուսումնասիրության ենթակա հանդեսում տեղ գտած Ջավախեցու պատկերներն ու հոդվածները չեն մտել նրա ստեղծագործությունների, քանիցս լույս տեսած, հրատարակությունների մեջ։

«Ախլոճը» և «Պապս» պատկերները կենդանի իրականությունից վերցրած իսկական գեղարվեստական գործեր են։ Ջավախեցու գրիչը ամենաթանձր, հյութալի գույներով վրձինել է հայ գյուղի անհրապույր պատկերը։ Եվ չի կարելի չհամաձայնել «Աշխատանքի» այն գնահատականի հետ, երբ այնտեղ ասվում է, որ «Ջավախեցին մեր գյուղի իսկական բանաստեղծն է. ուրիշ անուն չեմ կարող տալ նրա պատկերներին, որոնցից յուրաքանչյուրը մի-մի արձակ բանաստեղծություն է իր որոշ չափով, սիրուն, բուն ժողովրդական հանգով, դարձվածքներով»[17]։

Եվ իրոք, ինչպես իր մյուս, նմանապես այս պատմվածքներում Ջավախեցին հաջող կերպով օգտագործում է ժողովրդական կենդանի լեզուն ու ոճը, ժողովրդական բանահյուսության որոշ տարրեր, ստեղծում գեղարվեստական պատկերներ՝ հոմանիշների և մակդիրների առատ գործածությամբ։ Երկու պատմվածքների սյուժեն էլ միևնույն՝ գյուղական մանուկների կյանքն է։ Դրամի ամենազոր ուժը հեղափոխել է նաև մանկական աշխարհը, խլել նրանցից երբեմնի անհոգ ու ազատ կյանքը, խինդն ու ծիծաղը։ Գյուղացու մանուկն այժմ հարկադրված է մեծերին հավասար աշխատել, կտրել իր քաղցր քունը, շուտ սրթնանալ ու ամենածանր պարտականություններ կատարել։ «Ամառը կերթաս մալն արածելու, չեն թողնում ազատ, ազատ դաշտին մեջ սար ու ձոր չափես, սրտանց մի խնդաս, գեթ մի օր ուրախ խաղաս, թռչկոտաս»։ Ջմեռն էլ... «—Շուտ արա, պրծի, գոմերը ավլե, մսուրը սրբե, հորթերուն խոտ տուր, տակերը չորցու, թե դուրսը թիփի, բուք ու բորան է, մալին ջուր կրե, որ ներսը ջրես... Անխտիր ամենքն հրամայում են՝ հայրդ, հորեղբայրդ, եղբայրդ, պապդ...», այսպես է պատկերում մանկական հառաչանքը հեղինակը «Ախլոճը» պատմվածքում։

Հավատարիմ իր գրչին, Ջավախեցին իր գործերում հանդես չի գալիս լոկ անտարբեր լուսանկարչի դերում. նա շատ հաճախ միջամտում է, դատողություններ անում, դառնում գործող անձերի խոհերի ու մտորումների թարգմանիչ։ Աշխատավոր գյուղացու հոգու ընդվզումը, նրա ատելությունը բռնության դեմ այսպես է նա արտահայտում. «Բայց այս աշխարհում չէ՞ որ ամեն ինչ վերջ-

---

17 «Աշխատանք», 1906, № 12, էջ 192։

վախճան ունի... Ու ամեն ուժեղ, ամեն բռնապետ որքան մեծանա, որքան բրոնանա, այնքան իր վերջին, սև գերեզմանին շուտ կմոտենա»։

Ջավախեցին «Աշխատանքում» տպագրած իր թղթակցություններում արձագանքում է գյուղի կյանքում ժամանակին տեղի ունեցած որոշ իրադարձություններին։ Մի դեպքում (1906 թ., № 4) նա ողջունում է գյուղացիական նոր օրգանի՝ «Աշխատանքի» հրատարակությունը, որը, նրա ասելով, գյուղական թղթակիցներին կազատի «գրական վաշխառուներից» ու «կեղեքող խմբագրություններից»։ Մի այլ դեպքում (1906 թ., № 44) նա դիմելով հայրենի գյուղի աշխատավորներին, հորդորում է նրանց չհավատալ այլևս իրենց գյուղացու բարերարներ ցույց տվող մարդկանց և իրենց կարիքները (խոսքը նոր դպրոցներ բացելու մասին է) հոգալ սեփական ուժերով։

Ախալքալաքից գրած «Մրից-մրջուրը» թղթակցության մեջ Ջավախեցին արտահայտել է իր վերաբերմունքը դեպի «հեղափոխական» դաշնակցությունը։ Նկատելով, որ այդ օրերին դաշնակցությունը հանդես է գալիս որպես հայ գյուղի և հայ պրոլետարիատի միակ քաղաքական ղեկավարը, նա մի ակնառու փաստով ձաղկում է դաշնակցության «հեղափոխականությունը», ամոթաբեր համարելով նրա գործունեությունը։ Թղթակցությունը վերաբերում է Ախալքալաքում տեղի ունեցած մի ծխական ժողովին, որը պետք է պատգամավորներ ընտրեր էջմիածնի համագումարին մասնակցելու համար։ Դաշնակցական տեղական մարմնի եռանդուն ագիտացիայի հետևանքով ընտրվում են ժողովրդին անցանկալի մարդիկ, այդ թվում և մի մարդ, որը «խոշոր կալվածատեր է (2400 դեսյատին հող ունի), և հայտնի կապիտալիստ է քաղաքում և գավառիս «առաջին հարուստը... Եվ այդ մարդը «հեղափոխական» կուսակցության թեկնածուն էր»։ Այսպես է ղեկավարում, ասում է հեղինակը, ճակատագրական լինել չլինելու օրերում հայ աշխատավորներին դաշնակցությունը։

Հայաստանում հեղափոխական շարժման ակտիվ մասնակից, բոլշևիկ գրող ու բանաստեղծ, իր կյանքի 40-ամյա տարիքում դաշնակցության արյունալի տեռորի զոհ դարձած Ավետիք Գուլոյանը՝ ժամանակին հայտնի էր Սեյրի գրական ծածկանունով։

Ավետիք Գուլոյանը մեր դարի առաջին երկու տասնամյակի հայ հեղափոխական պոեզիայի շնորհալի ներկայացուցիչներից է։ Նա դեմոկրատական պարբերականներում, ինչպես նաև բոլշևիկյան մամուլում տպագրել է զգալի թվով հոդվածներ, պատմվածքներ, արձակ ու չափածո բանաստեղծություններ։ «Աշխատանքում» տպագրված են նրա «Երգ ու աշխատանք» (1906 թ., № 5), «Գեղջուկին» (1906 թ., № 10) բանաստեղծությունները և «Ճրագ» պատմվածքը։

«Երգ և աշխատանք» բանաստեղծությունը մի ներբող է աշխատավոր գյուղացուն ու հողին, որի մեջ Սեյրին ջերմորեն գովերգել է գյուղական աշխատանքի քաղցրությունը։ Ինչպես գրում է բանաստեղծը, դեռ մանուկ հասակում նա հրճվում էր, երբ հայրը նրան արտն էր տանում, և երգում էր նա, երբ թափվում էր աշխատանքի քրտինքը նրա մատաղ ճակատից։ Հողի և աշխատանքի նկատմամբ այդ սերը նա պահպանել է այժմ էլ։

Եվ այժմ այնպես անդուսպ կորովով,
Ես հողն եմ սիրում, իր բարկ արևով.
Իր լայն սրտի մեջ, իր տաք փոշու մեջ
Սիրում եմ ցերեկն աշխատել անխոնջ։

Թե՛ սյուժեով և թե՛ իր լեզվական ու ոճական կողմերով շատ ինքնօրինակ է «Ճրագ» պատմվածքը[18]։ Դրանում Սեյրին արձագանքել է ժամանակի հայ մամուլի, հատկապես գյուղացիական մամուլի նշանակությանն ու դառնությամբ պատկերել այն կապանքները, որոնք գոյություն ունեին ազատ մամուլի ճանապարհին։

Հայրենի լոռու բնության ու մարդկանց գեղեցիկ պատկերներ է նկարել «Հնձվորնին», «Մեր Բուրչուկը», «Սովորական բան» իր պատմվածքներում գրող ու մանկավարժ, ժողովրդական ուսուցիչ Սիմակ Սահակյանը։ Ճշմարիտ է նկատել «Աշխատանքի» խմբագիրը, որ նրան հաջողվում էր «առանձին համով ու հոտով» գրել գյուղական կյանքից։ Ժողովրդական կենդանի լեզվի հմուտ օգտագործումը նրա պատմվածքները դարձնում են ուշագրավ գեղարվեստական վավերագրեր։ Այսպիսով, իր հասարակական-գաղափարական էությամբ, իր հիմնական առաջատար աշխատակիցների կազմով «Աշխատանքը» ժամանակի պրոգրեսիվ լավագույն հանդեսներից մեկն էր։ Հայ պարբերական մամուլի պատմաբանն ու բանասերը առատ նյութ կարող են քաղել նրանից՝ մեր դարասկզբի հայ գյուղի սոցիալ-քաղաքական դեմքը հետազոտելու և բնութագրելու համար։

С. Т. Ишханян

ВЕДУЩИЕ АВТОРЫ ДЕМОКРАТИЧЕСКОГО ЖУРНАЛА «АШХАТАНК» (ТРУД)

Резюме

В 1906—1907 гг. в Тифлисе издавался один из лучших органов армянской прогрессивной печати—«Ашхатанк». Журнал по своему идейно-общественному направлению был рупором крестьянской демократии. Основателем, издателем и редактором «Ашхатанка» был видный армянский общественный деятель, талантливый публицист и журналист, одаренный сатирик Ашот Нагапетович Атанасян.

Сгруппировавшиеся вокруг журнала «Ашхатанк» передовые представители армянской демократической интеллигенции придавали журналу тот оттенок, то идейно-политическое направление, которые значительно отличают его от других органов печати демократическо-народнического направления.

В журнале перепечатана статья С. Т. Шаумяна «Текущий момент» и Фр. Меринга «Перманентная революция». На страницах журнала печатали свои публицистические статьи и художественные произведения видные деятели армянской культуры А. Атанасян, Ак. Акопян, Г. Агаян, Вртанес Папазян, А. Хнкоян, Х. Самвелян, М. Багратуни, Джавахеци (Газарос Тер-Григорян), Сейри (Аветик Гулоян), Симак (Симак Саакян), Г. Башинджагян.

Данная статья посвящена краткой характеристике ведущих авторов журнала, оценке их произведений, напечатанных в журнале «Ашхатанк».

---

18 «Աշխատանք», 1906 թ., № 6, № 8։